

չելագործը և ուրիշները։ Տեսնամ էք. երեք իրաւագէտներից մէկը ոչինչ չի ասում. մնացած երկուսն էլ կասկածով են վերաբերում։ Դրանց անունով տալով՝ իր բացատրութիւնը Մելիք-Թանգեան ասում է .«Պաւլիկեանների հիմնադիրն էր Միջագէտը Սամոսատ քաղաքից Պօղոս անունով մէկը... Պօղոսին կարգալոյժ արին Անտիօքում Գրիգոր Աստուածաբանը»։ Հեղինակը բաւական չէ որ իր բացատրութիւնները կապում է յիշուած նշանաւոր անձանց վզին, նաև Գրիգոր Սքանչելագործին շփոթում է Գրիգոր Աստուածաբանի հետ, որ առաջինից մի դար յետոյ էր ապրում։ Մի տեղ էլ (251 երես) Գրիգոր Սքանչելագործին անուանում է Հրաշագործ, մինչդեռ մեր ամբողջ հին գրականութեան մէջ, տօնացոյցների մէջ և նոյնիսկ ամենայն տարի օրացոյցների մէջ նա Սքանչելագործ է անուանում։

Այսպէս ուրեմն. այդ գիրքն իրը գիտական երկ՝ իր ուսումնամիրութեանց բաժնով՝ անարժէք է. տուած նիւթը անմըշակ և կասկածելի և տես-տեղ նոյնիսկ մեղանչում է ճշմարտութեան դէմ։

Գրքի միակ արժանիքը այդ նիւթերի առաջին անդամ համախմբուած հրատարակուիլին է, ու կարող է ծառայել իրը տեղեկատու և ուրիշ ոչինչ։

Արս. վ. Ղլուծեանց

Մ. Ա. Պարսամեան. «Անցանեմ» Կ. Պոլիս, Նշան-Պավիկեան գրատան հըրատարակութիւն, 1804 թ., գինն է 5 դրւ.։

Թրքահայ ներկայ գրականութեան լաւագոյն շրջաններից մէկն եղաւ 1890—95-ի կարճատև ժամանակամիջոցը,

Սակայն, ուժգին թափով սկսուած այդ շարժումը՝ իր հոյակապ թոփչքի մէջ խորտակուեց գժբախտաբար, որովհետև վըրայ հասան արինի և սուգի օրերը, յաւէտ անմոռանալի։ Կարմիր սարսափը՝ Վոսփորի ափերից մինչև Տիգրիսի եղերքները՝ անշարժութեան, մահուան գատապարտեց կեանքի ամեն գործունէութիւն, և վերահաս վտանգի սպառնալիքի տակ, գրական և հասարակական գործիչների մեծ մասը ապաստան փնտուեց օտար, հիւրընկալ հողերի վրայ։ Ու այնքան յուզումով ու այնքան խանդաղատանքով շինուած գրական բոյները քար ու քանդ եղան։ Սակաւաթիւ մնացողները՝ իրանց ընկերներից որբացած՝ մանաւանդ աւելի անողոք—առանց այն էլ արդէն չափազանց խեղդող—պայմանների մէջ դրուած՝ ստիպուեցին քէն պահել իրանց գրչի դէմ։ Քիշ-քիչ սարսափը սկսեց իր

յարձակողական գոյնը կորցնել, իրերն ու կեանքը սկսեցին առերևոյթ, յարաբերական մի խաղաղութիւն ստանալ ու շատ հեռացողներից քչերը միայն վերադարձն իրանց բոյնը:

Տիրող այն ռէժիմը, որ գտան իրանց վերադարձին, մարդկայնօրէն անհնար է բացատրել Պէտք է ապրած լինել գաղափար կազմելու համար այդ անլուր բարբարոսութեան մասին: Մարդկային, բանական կենդանու կաշուի տակ ապրելուց հազար անգամ նախապատիւ պիտի լինէր, ապրել, չնչել ու զգալ որևէ կենդանու մորթի տակ:

Ուրեմն, ի՞նչ ասել կուպէ, որ գրականութիւնը, հրապարակախօսութիւնը, այդ պայմաններում, մի տեսակ հերոսական, ցաւադին ճիգ պիտի լինէր, որովհետև գիտակից, կենդանացող խօսքը հալածուած՝ մարդիկ պէտք է իրանց բերանը բանային, ոչ թէ մտքեր, գաղափարներ արտայայտելու, աղգային, հասարակական հարցեր յուղելու, կեսնքի ու գործունէութեան հոսանքներ ստեղծելու համար, այլ շաղակրատելու, որպէսզի զոնէ իր արմատից մահացու կերպով վերաւորուած մտաւոր ու գրական ծառի շուրջը աղազուն ու նիհար թփիկների կանանչը զնեն և արինսի փոթորիկի տակ կուցած ժողովրդական հոգու մահանուս վհատութեան վրայ յոյսի գժզոյն ծաղիկներ թափեն...

Թրքահայը՝ լաւ չմարսուած ֆրանսիական գրականութեան ազգեցութեան տակ բնականից արգէն մի քիչ ճոռոմ, մի անկարելի գրաքննութեան պղնձէ ճեւքում զարձաւ շատախօս, ջըրիկ, թեթեամիտ Կրօնք և Սէր, ահա այն երկու բժացնող, մեղկացնող թէմաները, որոնց վրայ թրքահայ գրողը կարող էր անվերջ ասեղնագործել:

Տիրացու և Սիրահար—եղիք, որքան ուզում ես: Բայց կեանքը, լաւ կամ վատ, կանգ չէ առնում: Ու Պոլսի գլորցներ՝ բացի երկու երեք միջնակարգից բոլորը տարրական, հետըզնետէ կեանքի լայն ճամբու վրայ էին թափում իրանց շըրջանաւարաների յարդող շարքերը: Ի՞նչ պիտի անէին այդ խեղճերը. ի՞նչ կարող էին անել: Գործունէութեան ասպարէզները փակ էին: Նրանց մեծագոյն մասը՝ նիւթական անցուկ միջոցների տէր ծնողների զաւակ, անկարող էին ոչ թէ բարձրագոյն ուսումի հետապնդելու, այլ նոյնիսկ միջնակարգ կրթութեան հետամուտ լինելու:

Իբրև զպրոցաւարտ՝ իբրև մի շարք ութիւնաների վրայ զլուս յոգնեցրած, միտք մաղեցրած պատանիներ, բնականաբար, սնամէջ հպարտութեամբ ուռած էին լինում, մի արհեստաւորի մօտ մտնելով, կամ արհեստագործութեան մի ճիւղի ա-

շակերտելով ապրուստի մի հաստատ աղբիւրի տիրանալու համար։ Հաշուապահ, գրագիր, վաճառականի գործակատար, ահա այն պաշտօնները, որոնց կը ձգտէին։ Իսկ այն սակաւաթիւ բաղդասուները, որոնք՝ դպրոցական գրասեղանների վրայ մի քանի յաջող շարադրութիւններ արտադրած՝ քիչ ու շատ ծանօթ էին իրենց լեզուի համաձայնութեան ու շարադասութեան գաղտնիքներին, գրականութեամբ գրադուելու տարտամ երազներով հարրում էին։ Իսկ գրականութիւնը, ի հարկէ, նրանց համար լրագրութիւնն էր։

Իսկ լրագրութիւնը։ Անկարող, ինչպէս բացատրեցինք, կեանք ու շարժում ստեղծելու, պիտի աշխատէր իր ընդարձակ էջերի սպիտակը սևացնելու; պիտի բաւականանար անհոգի, ու յաճախ անմիտ խօսքի կեղծ գոհարները ցուցադրելով։ Լը րագրապետների մտահոգութիւնը աշխատակիցների որակը չէր, այլ քանակը։ Մեծածաւալ օրաթերթերը լեցնելու նիւթ հարկաւոր էր. ու նրանք գրաբաց պիտի ընդունէին լեզուի գըլ-խաւոր կանոններին չմեղանչող բոլոր փութկոտ, սրտատրով ու ձրի աշխատակիցները։

Ու այդ նորաւարտ, անփորձ, մտքի ու սրտի խղճուկ պաշարով պատանիներին մնում էր ինքնօգնութեամբ շարունակել մի քիչ դպրոցի գործը մտնելու լրագրական այնքան ըղձալի էջերից ներս։ Անպատրաստ՝ լուրջ աշխատութիւններ մարսելու, նրանք նետւում էին զուտ գրական գործերի վրայ։ Մտերմութիւն հաստատել ֆրանսիական ժամանակակից, ծանօթ անուն ունեցող վիպասանների և բանաստեղծների արտադրութեան հետ—այդ էր նրանց իդէալը։ Եւ, շնորհիւ իրանց անյողդողդ կամքին՝ շատերին յաջողում էր, եթէ ոչ հասնել, գոնէ մօտենալ դիւրին իդէալին։ Եւ այդ ըոպէից արդէն նրանք անցագիր ունէին լրագրութեան ամայի քառուղիներն անարգել արշաւելու։ Այսուհետ իրանցից էր կախուած՝ գրական քիչ ու շատ շեշտուած մի գիտակցութիւն իրացնելով։ Իրանց համար մի անուն շինել և իրանց աշխատակցութեան բարոյական վայելքին միացնել նիւթական վարձատրութեան վայելքը։

Համաշխարհային գրականութեան մէջ, ձեփ տեսակէտով ամենից շքեղ, ամենից ներդաշնակ ու կատարեալ արուեստագէտների, ֆրանսիացի հեղինակների ընթերցումը, առհասարակ արևմտահայ գրական սերունդների մէջ ծնեցնում է ամենից առաջ ձեփ մտսինոգութիւնը։ Խօսքի մեծ վարպետների հետ շըփումը սրում, նրբացնում է նրանց զգայնութիւնը (sensibilité), ճաշակը։ Դրա համար էլ այժմեան գրական նորագոյն երիտասարդութեան գլխաւոր արժանիքը թւում է լինել խորունկ մտքեր,

բարդ մտածողութիւններ արտայայտելուց աւելի—ասացինք որ
զրա ոչ ազատութիւնը և ոչ կարողութիւնը ունէին—գեղեցիկ,
զրաւիշ փայլուն ձևի տակ ներկայացնել իրանց ասելիքը: Ու սրա
համար է, որ թրափահայ համարեա իւրաքանչիւր գրողի մօտ կը
գտնէք մի բաւական ճռի, կոկիկ լեզու, պարբերութիւններ,
նախաղասութիւններ, որոնք հաղիւ թէ ապօրէն լինին: Եթէ
թրափահայ մամուլը՝ իր ընթերցողներին մտքի առողջ ու առատ
մնունդ մատակարարելու կոչման մէջ թերանում է, զննէ ար-
դար լինինք խոստովանուելով՝ որ նա իր յղկուած, կոկուած,
կանսնաւոր լեզուով մեծապէս օժանդակում է հայերէնի ուսուց-
ման և տարածման: Դպրոց և լրագրութիւն՝ ձեռք ձեռքի տու-
ածմեր արևմտեան եղբայրների մէջ, մայրենի լեզուի ու-
սուցիչներն են հանդիսանում:

Եթէ ասեմ, որ պ. Մ. Ա. Պարսամեան՝ Պոլսի գրական նո-
րագոյն սերնդին է պատկանում, նրա գէմքը՝ մանրամասնօրէն
բնորոշելու կարիք չի լինի, կարծում եմ: Բայց պէտք է աւելա-
ցնեմ, որ Անրջաննը-ի հեղինակը այդ սերնդի լաւագոյն ներկայ-
ացուցիչներից մէկն է: Երեսում է, որ նա շատ է կարդացել ֆրան-
սիացի բանաստեղծները, որոնցից զլիսաւորը, «բանաստեղծների
իշխան»-ը՝ Պոլ Վէոլէն, նրա վրայ աղդել է զգալի կերպով: Բայց,
որովհետև Վէոլէն՝ իր տաղանդի մեծութեան չափ տարօրինակ
կեանքով ապրած մարդ է: որովհետև նա ճանաչել է կեանքի
բոլոր երեսները, շատ տառապել, շատ վայելել, շատ երգել
է, կեանքի մէջ նոր թեսակոխոր հայ բանաստեղծը՝ չէր կարող
իւրացնել նրա զգայնութեան գլխի պառյա տուող, ցաւագին
սրութիւնը, նրա խոսվող, յուզող ու մոգական ֆոնը, այլ նրա
գոռոմը: Պոլ Վէոլէն՝ ամենից առաջ երաժշտութիւն էր փընտ-
առմ բանաստեղծութեան մէջ.

De la musique avant toute chose...

Փնտուել ուրիշ աղղեցութիւններ պ. Պարսամեանի ներ-
շնչման վրայ, մեզ շատ հետուները կը տանէր, իբրև սկսնակ
բանաստեղծ, բնական է որ Անրջաննը-ի հեղինակը զտնուի
իր ընթերցումների անմիջական աղղեցութեան տակ: Գլխա-
ւորն այն է, թէ նոր երգիչը, իր նախափորձերի մէջ ցոլացնում
է արուեստագիտական խառնուածք, ունի հոգու ինքնարուղին
ճիշեր, որոնք մեզ յուսադրեն նրա ապագայի մասին:

Պ. Պարսամեան երգում է Սէրը:

Թոթովող մարդկութիւնից պասած՝ մինչև մեր յոզնած, ա-
լոր օրերը, սէրը նիւթ է մատակարարել երգիչին: Սիրունուն
երգել են ամեն ձևերով, ամեն գոյներով: Դա մի լար է, որից
նոր խաղեր, նոր ներդաշնակութիւններ հանելը՝ չափազանց

դժուար է, եթէ հչ անկարելի: Հանճարի բերաններով սիրոյ երգը լսելուց յիտոյ, քիչ ու շատ կարդացած մարդկանց խստապահանջ զգայնութեան նոր սարսուներ, նոր ցնցումներ հաղորդվելու համար, գոնէ շատ զօրեղ խառնուածքի տէր լինելու է, իւրացրած լինելու է զգալու և արտայայտելու սովորական եղանակներից տարբեր ու բարձր եղանակներ:

Պ. Պարսամեանի տէրը մղկտացող, տանջուող չէ: Նըրա սէրը, առհասարակ, աւելի ուղեղից է բղխած քան սրտից: Նա ցանկանում է իր սիրականի հետ միայն երազել, երազել ինչ-պէս մի զոյգ տատրակներ, քաղաքի ժխորից հեռու, դաշտերի և լեռների լուսու ամայութեան մէջ: Ու խորհուրդ է տալիս իր երազի ընկերին փախչել դէպի սարերը, ուրբ հչ կնոջ, հչ այրեցու հանդիպինս և

Ուր առանձին, անտառներու շուքին տակ

Ծոյլ, աննախանձ, երազուն,

Գլուխս ուսիրդ վրայ հակած՝ մինչդեռ դուն,

Պիտի երգես վայրահակ:

Ու գինովցած, ծաղիկներուն ու մարմնիդ

Չար, անառակ բոյրերէն,

Քալէնք, երգէնք, իրար գլուենք տարփօրէն,

Նայուածքներով անըթիթ:

Եւ խելայեղ, յափշտակուած, մութէն մեղկ

Ծառերուն տակ հովանի,

Երկու սիրող թռչունի պէս քովքովի

Մինչև առտու երազենք:

Երբեմն սակայն, պ, Պարսամեանի հոգու վրայից անցնում է սիրոյ տաք, վրդովող մի շունչ:

Փայփայանքներդ երազած եմ օրերով,

Ծառերու տակ, ճամբուս վրայ ցաւադին.

Ակնարկներդ յիշել ուզած եմ՝ խռով,

Զիս օրօրող արտմութեանց մէջ առանձին:

Երբ ես անփորձ ու պատանի, մեծի պէս,

Աղուորութեանդ կը նայէի անքըթիթ,

Ինչու, հոգիս, չարչարեցիր զիս այսպէս,

Հեշտութինովմ եթերային մարմինիդ:

Եւ նա զգալով որ իր հոգու անդորրութիւնը կորցրեց, կարօտով փնտում է իր նախկին թիթե սէրը:

Մինչև հիմա չապրած սէրս էր որ այսպէս,
Թուղթերու մէջ կերգէի ևս անդադրում,
Սէրը դիւթող եթերային կոյսերուն,
Երազներու մէջ փայփայուած ամպի պէս:

Ու հիմա ալ որ կը սիրեմ քեզ անդուր,
Նոր ու ահեղ պաշտանքներու հրայքով,
Կուլամ յաճախ խարուող կնոջ մը պէս թոյլ
Առջի մաքուր ու սուրբ սէրս յիշելով:

Բայց նվ է այդ «աղուորը», որ մթնացնում է այդ երե-
խայական, երազնաբի միայն կարկառող հոգու աղաղակները:
Մի հարցընէք թէ ուր ճանչցայ.—չեմ յիշեր.
Ան որ սրտիս, զգուանքներուս,—գիրգ եղեմ,—
Ան որ տղու ըղձանքներուս անգիշեր,
Պարիկն եղաւ՝ միայն սիրելս գիտեմ:

Ու կարծեցի սիրուած ըլլալ հեռուէն,
Եւ այս յոյսով՝ երջանկացած, խելայեղ,
Գեղօններով երգեմ ըսի, դէմքն իրեն,
Շնորհները երգեմ ըսի, ամէն հեղի:

Դաշնակութիւնն առի հեծող նուագին,
Բուրումները առի՝ բոլոր վարդերուն,
Յասմիկներուն, սմբուլներուն, հիրիկին,
Անոր շունչը երազելով, թըրթըռուն:

Արշայոյին գոյներն առի անուրջի,
Ու սըլացքը աղաւնիին օդակայ,
Որ կը սուրայ, կը հեռանայ, կը թոյի,
Երբ պատահմամբ մէկը իրեն մօտենայ:

Բայց չի կրցայ գրի առնել անհատնում,
Անոր մարմնին շուրջները նախընծայ,
Ու փորձիս մէջ, հիասթափած, օրօրուն,
Գեղեցկութեան արշառութենէն գինովցայ:

Չի աչքին մէջ հմայքը կալ անհունին,
Եւ մարմնին շուրջ պաշտումն է որ կը հակի,
Մաղիկները անոր շնունջն է որ ունին,
Թոչունները՝ անոր ձայնը դաշնակի:

Հիմա նա խորան ունի կանգնած իր սրտում, ուր նա մի

մատոնա է, իսկ ինքը՝ իբրև բուրվառ վառւում ու ծխւում է
նրա ոտքերի առաջ.

Դուն մատօնն ես սէր-մատուին մէջ մինակ,
Ես բուրվառն եմ յոյս—քուրմին ձեռք սիրալիր.
Հուրվով լցուն, լունկով արքշիռ ու կարմիր՝
Կը վառիմ միշտ, կը ծխիմ միշտ ոտքիդ տակ:

Բայց զո՞ն եմ ես: Այսպէս ապրինք առանձին...
Դուն գեղոյդ մէջ վէս, անմատոյց ու ծաւի.
Ես օրօրուող բուրվառը միշտ մնայի,
Պաշտումի խօլ ծիածանին տակ նրբին:

Ու մեր սիրոյ մատուին մէջ սուրբ, լոին,
Ո՞չ ուխտաւոր, ոչ ազօթող մ'այցելէր.
Որպէսզի դռւն մինակ տեսնես, տարուրեր,
Մերթ բռաընկող կրակն արծաթ բուրվառին:

Բայց ամեն ինչ, աշխարհում, ունի մի վերջ. ծաղիկները
մեռնում են, երկնքի կրծքին փաթաթուող երփներանդ ծիա-
ծանները հալում են, ու սէրերը՝ վարդի թերթիկների նման՝
աշնան խոնաւ ու դալկացնող քամիների շունչի տակ, մէկիկ
մէկիկ թափում են:

Երդում ըրի, որ ալ ըզքեղ չյիշեմ.
Հըրապուրանք, գեղեցկութիւն, վերջնապէս,
Բոլոր ասոնք միշտ մոռնալու ըղձանքէս,
Երգում ըրի, որ ալ ըզքեղ չյիշեմ:

Ես չեմ ուզեր ըրած խօսքերս սիրային,
Գեղի ըլլան բոլոր բառերը մեղքի,
Զորս յամրաբար ականջէդ վար հոսեցի,
Զէ, չեմ ուզեր ըրած խօսքերս սիրային:

Դէմքիդ համար չէր որ ըզքեղ սիրեցի,
Այլ երազի, հաճոյքներու սիրաթով,
Ընկերակից մ'ուննալու տենջանքով.
Դէմքիդ համար չէր որ ըզքեղ սիրեցի...

Մեր առաջ բերած կտորները բաւական են գաղափար
տալու համար բանաստեղծութիւնների այս հատորիկի մասին:
Դժբաղդ պայմաններում ապրող, մտաւոր թեթև պաշարի տէր
մի սկսնակ երգչից աւելին պահանջել՝ առնուազն անարդա-
րութիւն կը լինէր: Ճիշտ է, ալ. Պարսամեան ստեղծագործ մի
խոշոր ուժ, մի արտակարգ տաղանդ չէ, բայց նա օժ-
տուած է բանաստեղծական յատկութիւններով: Նա ծանօթ է
Մայիս, 1905.

տաղաչափութեան համարեա բոլոր զաղտնիքներին, մի ձիրք, որ պէտք է լապտերով փնտուել մեր կովկասահայ՝ ոչ թէ ոկմանակ, այլ նոյնիսկ փորձուած բանաստեղծներից մեծ մասի մօտ եւ ինչպէս, առհասարակ, ամեն թրքահայ գրող, նա ունի ճոխ բառամթերք, այսինքն գեղարուեստական այլազան պատկերներ յօրինելու համար բազմաթիւ գոյներ, երանդներ, որոնք, երբեմն, ասենք, չարաշար է գործ ածում, տաղաչափական պահանջմանից ստիպուած:

Տ. Զաւէն

Մելքոն Եսայեան, «Երազ» (պատկեր Բալախանու կեանքից), 1905, Թիֆլիս, Յ կոսէկու

Պ. Եսայեան մեզ տալիս է Բալախանու կեանքից ոյի պատկեր: Նաւթաքաղաքը ում, որ դասակարգի մարդկանց ասես չի բաշում: Այդ ձգողութիւնը մասնաւրապէս ուժեղ է թւում գիւղերում, որոնք իրանց թարմ բաղուկներն ուղարկում են գործարանային քաղաքը՝ այստեղից մի քիչ հարստութիւն, ու, եթէ ուզում էք, մի քիչ էլ անոնք բերելու համար: Այս կամ այն շինական ընտանիքը օրինակ է վերցնուած իր դրացնից և իր անփորձ, միամիտ զաւակին ուղարկում երազների երկիրը: Շիրինենք այդ կարգի ընտանիքներից մէկն են. մայըն իր որդուն ճանապարհ է գցում գէպի Բագու գեղջկուհու մի շարք միամիտ-խորամանկ խրատներով. նա, ի միջի այլոց, ասում է.

—... Մի օր սոված մնալով՝ մարդ չի մնունիլ. որ յետ դառնաս տուն, բեզ չեն հարցնելու թէ ի՞նչ ես կերել. ասելու են՝ ի՞նչ ես բերել. գրապանդ են պատելու: Գրպանումդ որ եղաւ, խօսքը քոնն է... Մի խօսքով այնպէս արա, որ Շիրինենց Աղջանին գիւղամիջում պարզ երես հանես... .

Խեղճ Սաքօն գնում է, լծում՝ գործաւորի քայըրայող աշխատանքին: Նա վարժ չէ այդ կեանքին, բայց ի՞նչ արած, պէտք է Շիրինենց Աղջանի երեսը պարզ հանել: Մի ձմեռ գիշեր, վեղեօրշիշիկի պաշտօն է կատարում, նաւթահան ճախարակի մօտ հակում է, բայց խոնջէնքից և անքնութիւնից քոնը տանում է: Յաճախ անժառանգի միակ հարստութիւնը երազն է լինում: Նա երազում է, երազում է, որ փող է աշխատել, հարստացել և վերադարձել արդէն գիւղ. հայր ու մայր, աղջական ու բարեկամ հաւաքուել ուրախանում են... Թրը՛խկ, մէկ էլ Սաքօն սարսափած բաց է անում աչքերը. «Ժարօնկան»— նաւթահան գլանակը—տեղից գուրս էր թաել և ամբողջ բուրգ պղպացնում էր: Հաղիւ աչքերը բացաձ մի փառաւոր ալ-